

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎՐԺԻ

ԱՄԱՎԵՐՁԻ ԼԱՆՐԵՍԸ

21 Յունիս, 1959

ԲԱՄ. ՓՈՐՈՏԱՆ: Ահա բոլորին սրտերը կը թնդան. վառվռուն պատանիներ, սեւ ու փայլուն աչուկներով լեցուցեր են բեմը թիէփուկեան դահլիճին, ուր կը թեւածեն այսօր դարձեալ ողիները Վարուժանի եւ Ալէքսանդրի: Մուրատի եւ Ռաֆայէլի երազն ահա վերականանայ Վենետիկի չքնաղ ափերուն:

Հայ եւ իտալ քայլերդներէն վերջ՝ տեղ կը դրաւն բոլոր հիւրերը: Հանդէսին կը նախագահէ Վենետիկի Ամեն. Պատրիարքը, որ իր մասնակցութեամբ նոր ողբերգութիւն մը կու տայ սրահին: Պետական ու քաղաքական ներկայացուցիչներ, հիւպատոսներ, ուսումնական պաշտօնէութեան անդամներ, Ուիտիոս Գերպօ. Արքայազնը, աշակերտներու ծնողներ՝ իտալիոյ ամէն կողմերէն, նոյնիսկ արտասահմանէն, կը ստեղծեն ջերմ ու մտերմ լի մթնոլորտ մը:

Վարժարանին Ուսումնապետը՝ Հ. Յովսէփ Պեհեմանիլեան կը կարդայ իր տարեկան ընդհանուր տեղեկագիրը, պատկերացնելով այն ջանքերը որոնք թափուած էին Մուրատի ու Ռաֆայէլի այս ոսկեղէն դաշտին մէջ, որուն հունձքը ահա քաղցր էր տեսնել, արդիւնք տաժանագին աշխատանքի, երկուստեք կատարուած, աշակերտութեան եւ ուսուցիչներու կողմէ. եւ ուրախութիւնն ալ ահա ատոր համար կը զանաւար հասարակաց:

Ի պատիւ ամէնազգի հիւրերուն, աշակերտները յաջողութեամբ վարտասանեն եւ կ'ուղերձեն այդ լեզուներով, հայերէն, իտալերէն, ֆրանսերէն, արաբերէն:

Կոմիտասեան Սարգիսի վրով գնաց, իր

նուրբ եւ հետզհետէ մարող հաղար արձագանգներով՝ կարօտի եւ սիրոյ ալիքներ կը ծածանէր ամէն կողմ. անոր յաջորդող թեթեւեղութեան եւ ուրախ «Էս գիշեր լուսը տեսայ» պարերը պարզեց մեղի հայրենի գիւղի զուարթ տօներու առաւօտը: Աշակերտական խմբերը, յաջորդաբար երգեց իտալական լեռնային երգ մը, ձորերն ի վեր երկարող պայծառ արձագանգներով:

Գեղարուեստական բաժինը ճոխացուցին Ն. Կէօչէրեան եւ Է. Պեհեմանիլեան, դաշնակի վրայ նուագելով ընտիր կտորներ Ծոփէնէն եւ Շուսանէն:

Յուզիչ էր պահը վկայականներու եւ մրցանակներու բաշխումին: Աշակերտներէն ոմանք բարեբախտութիւնն ունէին իրենց ծնողքին իսկ ձեռքերէն ընդունելու աւարտական վկայականը, որ անշուշտ երախտագրտական առաջին տուրքն է հասուն աշակերտին կողմէ, մայրական ջերմ համբոյրով մը թրջուած:

Եւ ահա կանգնած է վարժարանին Տեսուչը՝ Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեան, իր հայրենի խօսքն ուղղելով շրջանաւարտ պատանիներուն, որոնք այսօր կը թեւափոխեն իրենց կեանքի մէկ նոր շրջանը. կը թեւափոխեն յաղթանակով. ու այդ, ի հարկ է, դրաւականը պիտի ըլլայ ապագայ յաջողութեանց: Հայրենիքի ու կրօնքի դադափարը հիմ պիտի կազմէ այդ երիտասարդներուն ապագայ կեանքին, հիմ ու խորիսխ ամուր, որ չի զիտեր սասանիլ, այլ կը մնայ բարձր՝ ինչպէս այդ պահուն մեր շուրջ ծածանող դրօշը նուիրական:

Ամէնէն վերջ խօսք կ'առնէ օրուան ա-



ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎՐԺԻ ԾՐՁԱՆԱԽԱՐՏՆԵՐԸ ԵՒ ՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ (1958-1959)

Ձախէն աջ, ուսի. — Միսաք Տէր Յովհաննէսեան (Բեսայ), Վարուժան Միքայէլեան (Հալէպ), Գրիգոր Զիւմպուլեան (Մարտիրիա), Յովհաննէս Պապայեան (Միլան), Վարուժան Պոյաճեան (Հալէպ), Վարուժան Թորոսեան (Աթէնք), Յարութիւն Կիւլեան (Պոլիս), Յարութիւն Երամեան (Աթէնք), Գարրիէլ Գէորգեան (Աթէնք):

Ձախէն աջ, նստած. — Եղուարդ Էմիրխանեան (Հալէպ), Սիմոն Գէորգեան (Հալէպ), Հ. Պորէն Վրդ. Տիւրիկեան (Մատակարար եւ Ուսուցիչ), Հ. Վահան Վրդ. Յովհաննէսեան (Տեսուչ), Հ. Յովսէփ Պեհեմանիլեան (Ուսումնապետ), Կարպիս Թոփճեան (Հալէպ), Երուանդ Պաշտուրեան (Հալէպ):

մենապատուական հիւրը, Վենետիկի Ամենապատու. Պատրիարքը, Ծիր. Յովհ. Ուրպանի: Ծանօթ արդէն Միխիթարեանց դարաւոր Հաստատութեան եւ վարժարանի պատմութեան, Վսեմ. Ծիրանաւորը կ'ողեկոչէ նախ յիշատակը վարժարանի պատկանելի ուսուցիչներուն, որոնք անդարձ մեկնած են աշխարհէս, եւ որոնք ուսուցիչ եղած են նաեւ նոյն ինքն Ծիրանաւոր Պատրիարքին: Կը յայտնէ ապա իր զնահատանքը, յայտարարելով թէ նոյն իսկ հայերէն ընթերցումներուն եւ արտա-

սանութիւններուն մէջէն կրցած է ըմբռնել կարօտի եւ հայրենասիրութեան անկեղծ զգացումները, հզօրապէս հայկական: Փակեց իր խօսքերը, հանդերձ հայրական օրհնութեամբ, մաղթելով վարժարանին եւ բոլոր Հայոց՝ բարօրութիւն եւ երջանկութիւն:

Վարժարանին քայլերը, երախտագրտութեան վառ շնչերով երգուած, եղաւ փառքի դափնեպսակ մը՝ Մուրատի եւ Ռաֆայէլի անմահ ճակատներուն:

ՆԵՐԿԱՅ ՄԸ